

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՈՉ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻՆ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ԹՈՒՐԲԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Հրատարակվող սուլթանական հրովարտականն ու պաշտոնական գրովթյունները բովանդակում են Օսմանյան կայսրությանում ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ տարվող հողային, հարկային քաղաքականության, մանկաժողովների, դավանափոխության, եկեղեցիների քանդման, կրոնական ծիսակատարությունների սահմանափակման, ազգային տարազի արգելման ու դիսկրիմինացիոն ալլակների վերաբերյալ նյութեր: Սույն վավերագրերը լիովին ժխտում են մեր ժամանակների թուրք պատմաբանների այն պնդումները, որ թուրքերը, իբրև թե, տեական խաղաղ ու մարդասիրական քաղաքականություն են վարել հպատակ ազգերի նկատմամբ, որ բրիտանյա ժողովուրդները ապրել են լավագույն պայմաններում և վայելել են մեծ արտոնություններ:

Վավերագրերը վերջված են թուրքերեն արխիվային հրատարակություններից և բերվում են լրիվ կամ բաղվածաբար, իրենց վերնագրերով: Թարգմանելիս աշխատել ենք հարազատ մնալ բնագրերին՝ պահպանելով հրովարտականի ոճական առանձնահատկությունները և պատմական տեղանքները: Տրվում են անհրաժեշտ ծանոթագրություններ:

Ա. Հ. ՓԱՓԱՋՅԱՆ

1

Կալիպոլիում [շիրա վահառելը] արգելելու մասին¹

...Մյուսելլիմնամե² շունեցող անհավատներից ով որ ամուսնանա, թող ամուսնական հարկի արժեքը վերակացուներին վճարի: Քանի դեռ չի վճարել գերդեկ³, թող չձևակերպվի:

Ե՛վ հայերը, և՛ հրեաները և թե՛ այլ մարդիկ շիրայի⁴ ժամանակ իրենց այգիներից բերած շիրան առանց հիշյալ վերակացուներին հարցնելու սալլերից վար չառնեն: Եթե իջեցնելով իրենց տները տեղափոխեն, ապա իմ հսկիչը հայտնաբերելու դեպքում թող նրանց պատժի ինչպես հարկն է: Եվ շիրայի յուրաքանչյուր մեղրեից⁵ թող մեկ ակչե⁶ գանձվի: Հարկատու անհավատները իրենց թաղում գտնվող գինետներից բացի այլ տեղ գինի չվաճառեն: Եվ իրենց բերքից բացի, եթե մի այլ ալգուց շիրա բերեն և իրենց տներում վաճառեն, ապա իմ հսկիչը հայտնաբերելու դեպքում գինին թող բեկլիք⁷ դարձնի և նրանց էլ պատժի:

...Եվ շիրալի ժամանակ շիրա բերող սալլորդները առանց իմ վերակացուներին հարցնելու շիրան վար չառնեն և չտեղափոխեն իրենց տները: Հակառակ դեպքում, իմ հսկիչը նրանց սալլերն ու գոմեշները բեկլիք դարձնի և նրանց պատժի: Եվ առանց վերակացուներին հարցնելու [տակաուր] չբացեն [գինին] չքամեն և չծախեն: Հակառակ դեպքում, իմ հսկիչը թող գտնի և մաքսը առնելուց հետո նրանց պատժի ենթարկի:

1. Այս հրամանագիրը հրապարակվել է սուլթան Մեհմեդ II-ի (1451—1481 թթ.) օրոք, 1476 թ. տե՛ս R. Anhegger, H. Inalcik. Kanunname-i sultanı ber mucceb-i örfi osmani. Ankara, 1956, s. 63—64.

2. Հարկ չվճարելու արտոնագիր:

3. Ամուսնական հարկ:

4. Խաղողի հյութ:

5. Դինու և այլ հեղուկների համար օգտագործվող չափ, մոտավորապես 12—20 լիտր:

6. Թուրքական արծաթյա գրամ:

7. Բեկի իշխանության ենթակա:

2

Հրամանագիր Կալսերի (Կեսարիա) բելին¹

972 թ. (1564)

Սրանից առաջ իմ բարձր հրամանով քո իշխանության տակ գտնվող վայրերում ղեկիւրմեհի² ենթարկված տղաները, Ստամբուլ բերվելով, հավատափոխ էին արվել, դարձվել մահմեդական: Ականջալուր եղանք, որ նրանցից մի քանիսը, փախուստի դիմելով, վերադարձել են իրենց նախկին վայրերը և դավանափոխվել: Արդ, հրամայում եմ, երբ իմ բարձր ֆերմանը տեղ հասնի, հետամուտ եղիր այս գործին և իմ բարձր հրամանով ղեկիւրմեհի ենթարկված այն տղաները, որոնք փախուստի դիմելով դավանափոխ են եղել, հավաքիր, անունները գրելով դաֆթար կազմիր և վստահելի անձանց հետ ուղարկիր Ստամբուլ: Նրանց հսկող անձանց կարգադրիր, որ ճանապարհին ուշադիր լինեն: Այդպես իմացիր³:

1. Հրամանագիրը տրված է սուլթան Սուլեյման I-ի (1520—1566 թթ.) կողմից:

2. Մանկաժողով: Ենիշերիկյան զորախումբը համալրելու համար քրիստոնյա երեխաների բռնի հավաք: Հայկական նահանգներում մանկաժողովը սկսել է գործադրվել 1519 թ.:

3. I. II. Uzunçarşılı. Osmanlı devleti teşkilatlarından kapukulu ocakları c. I. Ankara, 1943, s. 126.

3

Պալաթի դարպասից¹ դուրս անօրինական կառուցված եկեղեցին ֆանդելու մասին²

8 ռեբի ուլ-էվել 973 թ.

(3 հոկտեմբերի 1565 թ.)

Հրամանագիր 4. Պուլսի կադիին³:

Անհավատ ձկնորսները խնդրագիր են ներկայացրել կայսերական սեմին, հայտնելով, որ իմ բարձր հրամանի համաձայն Պալաթի դարպասից դուրս կառուցված եկեղեցին փականքի տակ է առնվել, և ծիսակատարություններն էլ արգելվել են:

Հիշյալ եկեղեցու առաջին հարկը նախապես տուն է եղել, և հետագայում անհավատները դրա վրա եկեղեցի են կառուցել: Երբ տեղեկացվեց, որ ալու [նոր կառույցը] իր բարձրությամբ գերազանցել է այնտեղ գտնվող տներին, հրամայել էի քանդել և հավասարեցնել մյուս տների հետ:

Այս հարցի համար կայսերական մյուլթեֆերիկաներից⁴ Սեկրան Ալիին վերակացու նշանակելով, հրամայեցի, որպեսզի հիշյալն առանց հապաղելու մեկնի տվյալ վայրը և քանդի ապօրինի կառուցված բոլոր տները: Հետևաբար ոչ մեկին թույլ չտաս [չինարարական] գործ անել: Խստագույն կերպով պատվիրիր անհավատներին, որ հիշյալ տան միջ ալսուհետև չհավարվեն և իրենց սովորությունների համաձայն ծիսակատարություններ չանեն: Միևնույն ժամանակ զգուշացրու շրջապատի մահմեդականներին, որպեսզի ուշալուրջ լինեն: Մի խոսքով, այնպես չստացվի, որ մահմեդականները, գալով, լուր տան, որ հիշյալ տան մեջ անհավատներ են հավաքվում կամ քանդվածը վերականգնելու փորձեր են կատարում:

Այդ մասին թող լավ իմանան: Ոչ մեկին թույլ չտաս, որ իմ հրամանին և շարիաթի⁵ սկզբունքներին հակառակ գործեն⁶:

1. 4. Պուլսի քաղաքային դարպասներից մեկը, Ոսկեղջյուրի արևմտյան ստիին: Այստեղ է գտնվել հին և անգործության մատնված հունական մի եկեղեցի. որը հանձնվեց հայերին, երբ 1627 թ. սուլթան Մուրադ IV-ի (1623—1640 թթ.) հրամանագրով էդիրնի դարպասի մոտ դռնվող

հայկական Մ. Նիկողոս Էկեղեցին վերածվեց մզկիթի: Տե՛ս E. C. Kömürçüyan. Istanbul tarihi, tercume ve tahsiye eden H. Andreasyan. Istanbul, 1952, s. 20.

2. Հրամանագիրը տրված է սուլթան Սուլեյման I-ի կողմից:

3. Կաղալի գլխավոր դատավոր:

4. Հրամաններ իրականացնող պաշտոնյա:

5. Աստվածային պատվիրանների վրա հիմնված նվիրական կանոններ:

6. Ahmet Refik. On altıncı asırda İstanbul hayatı. İstanbul, 1935, s. 45.

4

Ոչ մահմեդականների տարազի տեսակների մասին

7 սաֆեր 976 թ.

(1 օգոստոսի 1563)

Հրամանագիր 4. Պոլսի կադիին¹,

Սրանից առաջ իմ կայսերական հրամանը եղավ, որ հրեաները, քրիստոնյաները և այլ անհավատներ բարձր տեսակի պատրաստի հագուստներ չհագնեն: Արգելման հրամանից հետո հրեաներից մի քանիսը, դիմելով իմ կայսերական սեմին, խնդրել էին, որպեսզի տարազի հարցում պահպանվեն անցյալի սովորությունները: Իրանից հետո այս խնդրի մասին եղավ իմ հատուկ հրամանը: Այսուհետև հրեաների և այլ անհավատների ֆերաջենները² լինելու են սև շուխաններից, թեմկաները³ ոչ թե կերպասից, այլ աստառացու կտորից, գլխի փաթթոցները կես վարդագույն և կես կարմիր թող լինեն և արժեքն էլ 30—40 [ղուրուշից] ոչ ավելի: Մաշիկները պետք է լինեն սև գույնի, հասարակ և առանց աստառի: Թող այլ գույնի չլինի: Միմիայն եզրերը թող սև մեշինից լինեն, այն էլ ոչ սաֆյանից⁴: Կանայք չպետք է ֆերաջե հագնեն: Իրենց հին սովորության համաձայն թող ֆահիր⁵ հագնեն և բուրսայի քուլթնու⁶, իսկ շաքշիրները⁷ թող երկնագույն լինեն, այլ ոչ թե սև: Կանայք չպետք է մաշիկ հագնեն, այլ հին սովորության համաձայն՝ կոշիկ և շիրվանի: Մահմեդական կանանց նման լայն օձիքներ և թասակներ չկրեն: Անհրաժեշտության դեպքում թող ատլասից և կամ բամբակից պատրաստված թասակներ կրեն: Հայերը ևս հրեաների նման թող հագնեն: Միմիայն թե գլխներին կարմրավուն փաթթոց թող կապեն, այն էլ ոչ շատ արժեք ունեցող: Հալ կանայք ևս ֆերաջե չեն կրելու: Ֆերաջեի փոխարեն թող ֆահիր հագնեն, իսկ ոտքերին էլ բաթիկներ, ներսից սև գույնի բուրսայի քուլթնու, ոտքերին կապույտ շաքշիր, մեշինե հողաթափ և շիրվանի մաշիկներ: Հրեաները և այլ անհավատները երիզավոր աստառով սև ֆերաջեններ թող հագնեն: Ներսի կողմից հագած դոլաման⁸ թող սև գույնի լինի, այն էլ բուրսայի քուլթնուից: Թող հարթ և արդուկված չլինի, այլ պարզ և հասարակ: Ֆահիր հագնելու դեպքում միայն սև գույնի թող լինի: Փաթթոցները, երիզները, ոտնամանները պետք է վերևում նշվածի պես լինեն:

Սև[ամորթ] անհավատները նույնպես հագնելու են վերը նշվածի պես և փաթաթվելու են կոթի⁹ մեջ՝ նույնպես ոչ շատ արժեք ունեցող: Ներսից և դրսից թող իշքերլատ¹⁰ չհագնեն, այլ՝ ֆերիյե և սելանիկի շուխա: Իսկ ոտքերին երկու ալանջակալներով, վրան էլ աստառից հողաթափ թող հագնեն:

Արդ հրամայում եմ, բարձր հրամանս տեղ հասնելուն պես բոլորին հավաքես մի տեղ և անհրաժեշտ բացատրությունը և հրահանգը տաս, որպեսզի հիշյալ համայնքների տարադները ըստ վերը նշվածի պես լինեն և զգուշացնես, որ բարձր արժեք ունեցող հագուստներից խուսափեն: Այս խնդիրը հրահանգված է նաև մուհթեսիբին¹¹, հետևաբար հետևիր, որ իմ բարձր հրամանի հակառակ չգործեն: Անհրաժեշտության դեպքում հայտնիր օրինադանցների անունները¹²:

1. Հրամանագիրը տրված է սուլթան Սելիմ II-ի (1566—1574 թթ.) կողմից:
2. Հայն թևերով, ծածկոցանման շոր, որի մեջ փաթաթվում են մահմեդական կանայք:
3. Հագուստի մի տեսակ:
4. Այծի կաշի:
5. Հագուստի մի տեսակ:
6. Բամբակյա հյուսվածքից պատրաստված հագուստ:
7. Շալվարի մի տեսակ, կանացի չաքշիրները զարդարված էին լինում սրմալի արծաթյա կամ ոսկյա թելերով:
8. Դոլամաք (dolamak) փափաթիլ բառից: Արտահագուստ, այդպես է կոչվել նրա համար, որ փեշի ծայրերը փաթաթելով մտցվել է մեջքի մեջ: Հագուստի վերևի մասը մինչև գոտկատեղին կոճկվում էր: Թևերը լայն, բազուկների մոտ նեղանում էին:
9. Նկատի ունի երկնագույն կտորը:
10. Իտալերեն skarlato բառից. կարմրագույն վեներիկի շուխա:
11. Քաղաքի կարգ ու կանոնին հետևող պաշտոնյա, ոստիկանապետ:
12. Ahmet Refik, s. 47.

5

Կ. Պոլսում բնակվող ոչ մահմեդականների տաճարի մասին

21 սաֆեր 976 թ.
(15 օգոստոսի 1568 թ.)

Հրամանագիր Կ. Պոլսի կաղիին¹:

Իմ կայսերական սեմին նամակ էիք հղել, հաղորդելով, որ Կ. Պոլսում քնակվող անհավատները, այդ թվում հոռեա և քրիստոնյա տղամարդիկ և կանայք սկսել են հագնել երիզավոր բարձր տեսակի մահուղե [հագուստներ] և վրայից էլ սիփահիների և այլոց նման բարակ բառիստե գործված քեղեններ, ատլասից և զանազան գործված քեղեններից խալաթներ, գուլնզգուլն չաքշիրներ, ինչպես նաև մահմեդականների նման մաշիկներ և հողաթափեր: Այս հանդամանքը շատ է բարձրացրել գործված քեղենի, մահուղի կերպուսների և կոշկեղենի գինը: Մի խոսքով հայտնել էիք, որ այսուհետև անհավատները չկրեն մահմեդականներին նմանվող հագուստներ:

Արդ, գրված և ուղարկված է անհավատներին արտահագուստին վերաբերող իմ կայսերական ընդարձակ հրամանագիրը:

Սուլնը և նախկին հրամանագիրը տեղ հասնելու պես գործիր ըստ կայսերական կարգադրության: Այսուհետև անհավատների կանանց, լինի հոռեա կամ քրիստոնյա, ինչպես մանրամասն նշված է նախապես ուղարկված հրամանագրում, թույլ չտաս հագնելու բարձրորակ հագուստներ:

Ոչ ոք չհամարձակվի գործել հակառակ իմ հրամանագրին²:

1. Հրամանագիրը տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից:
2. Ahmet Refik, s. 46.

6

Կայսերական հրովարտակ¹

15 ռեջեր 980 թ.
(21 նոյեմբերի 1572 թ.)

...Հրամայում եմ, իմ ծառան, տեղ հասնելուն պես, պաշտոնական դաֆթերներ² հիման վրա և կաղիի հովանավորությամբ թող զանձի վերոհիշյալ ոչ մահմեդականների խառաջները³ և միևնույն ժամանակ կազմի առանձին և մանրամասն հոդվածների: Հրամայում եմ արձանագրել նաև այս տարի Յավա⁴ եկած ոչ մահմեդականների անունները: Ներկայումս անհրաժեշտ է

սինտրել և գտնել հիշյալ ոչ մահմեդականներին, նրանց քահանաներին և քահանայտեղի խորաջ վճարելու կարող մարդկանց: Այնուհետև նրանց անունները արձանագրել դաֆթարի մեջ և շարիաթական օրենքով գանձել խորաջները: Խող ոչ ոք չթաքցնի խորաջ վճարելու կարող ոչ մահմեդականներին: Մի խոսքով, պետք է ջանք թափեք, որ խորաջ վճարելու կարող ոչ մահմեդականները դաֆթարից դուրս չմնան և բոլորն էլ արձանագրվեն հարկացուցակներում:

Առանց բացառության խորաջը հավաքելուց հետո յուրաքանչյուր ոչ մահմեդականից անհրաժեշտ է հավաքել երեքական ակչե ևս, որից երկու ակչեն մուտք է գործելու իմ կայսերական գանձարանը, իսկ մյուս մեկը մնալու է էմին նշանակված վերահիշյալ ծառայիս տրամադրության տակ: Սրանից բացի ոչ մեկ ակչե չի գանձվելու:

1. Հրովարտվե տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից: Այն ուղղված է Կ. Պոլսի ծովափնյա շրջաններում բնակվող ոչ մահմեդականներին: 1. H. Uzunçarşılı. Osmanlı devleti teşkilatlarından kapu kulu ocakları. C. 2. Ankara, 1944, s. 231.

2. Գրանցման մատյան:

3. Ոչ մահմեդականներից գանձվող գլխահարկ:

4. Նկատի ունի Կ. Պոլսի ծովափնյա շրջանները:

7

Փողոցում ֆեխտունյաների տիկով գինի կրելու մասին

Ջիհիջջե 979 թ.

(սպրիլ 1572 թ.)

Հրամանագիր Գալաթայի կադիին¹:

Իմ կայսերական սեմին նամակ ես հղել այն մասին, որ Գալաթայի այանները², դիմելով շարիաթական դատարանին, հայտնել են, որ մի շարք գյուղերից եկած անհավատներ Գալաթայի նավահանգստում գինի բերող նավերից դինին փոխանակ տակառներով պահեստ տեղափոխելու կրում են տիկերով և քաղաքի մեջ անցուղարձի ընթացքում քսվում մահմեդականներին:

Հայտնում ես նաև, որ սրանից առաջ շարիաթական դատարանը, անդրադառնալով այս հարցին, մյուսօրին³ ֆեթվա⁴ է արձակել, ուր խստագույն կերպով հանդիմանել էր անհավատներին, որ տիկով գինի կրելու դեպքում կպատժվեն և կենթարկվեն երկարաժամկետ բանտարկության: Այսուհանդերձ որոշ մարդիկ, համառելով, դարձյալ գինին կրում են տիկերով:

Այս կապակցությամբ խնդրել էիր իմ կայսերական բարձր հրամանը:

Արդ հրամայում եմ, շարիաթի սկզբունքներին հակառակ ոչ մեկին թույլ չտաս տիկով գինի կրելու⁵:

1. Հրամանագիր տրված է սուլթան Սելիմ II-ի կողմից:

2. Ավագանիները:

3. Մահմեդական կրոնական աստիճան:

4. Մյուսօրին կողմից տրված պաշտոնական գրություն:

5. Ahmet Refik, s. 48.

8

Ոչ մահմեդականներին գերի չվաճառելու մասին

27 համադան 983 թ.

(30 դեկտեմբերի 1575 թ.)

Հրամանագիր Կ. Պոլսի կադիին¹:

Պարզվել է, որ դերիների վաճառքով զբաղվողները հրեաներին և քրիստոնյաներին գերի են վաճառում: Վաճառված գերիների մի մասը եղել է մահ-

մեղական, մի մասն էլ պատրաստ է եղել մահմեդականությունը ընդունել: Ձեռք բերված գերիներին հրեա և քրիստոնյա դարձնելով, նրանք գործել են շարիաթի սկզբունքներին հակառակ:

Արդ հրամայում եմ: [Հրամանս] տեղ հասնելուն պես, խստորեն պատվիրես և արգելես գերիների վաճառքով զբաղվողներին այսուհետև հրեաներին և քրիստոնյաներին գերի վաճառել: Բոլոր գերիներին, տարիքոտ, թե երիտասարդ վաճառելու են մահմեդականներին, և ոչ մեկը չհամարձակվի հակառակ իմ հրամանի վարվել: Որևիցե մեկը, եթե զգուշացնելուց հետո համարձակվի վաճառք կատարելու, ապա առնողն էլ ծախողն էլ ենթակա են կալանքի և արտորման: Վարվիր այս ձևով և արգելիր: Նույնիսկ շտապ կերպով կարգադրիր, որ հրեաների և քրիստոնյաների մոտ գտնվող գերիներին հետ վաճառեն մահմեդականներին: Ոչ մեկին թույլ չտաս, որ իմ բարձր հրամանին հակառակ գործեն: Հրեաներին և քրիստոնյաներին խստագույն ձևով պատվիրիր, որ այսուհետև գերու վաճառքով չզբաղվեն²:

1. Հրովարտվեց տրված է սուլթան Մուրադ III-ի (1574—1595 թթ.) կողմից:

2. Ahmet Refik, s. 50.

9

Ոչ մահմեդականների՝ իրենց արտաքին տարազով մահմեդականներին չնմանվելու մասին

20 օգոստոսի էլ-ահիր 985 թ.

(4 սեպտեմբերի 1577 թ.)

Հրամանագիր Կ. Պոլսի կադիին¹:

Հաղորդվում է, որ Կ. Պոլսում բնակվող հրեաների և քրիստոնյաների հաղուստները, դյուլբենտները (շղարշ) և ոտնամանները չեն նմանվում իրենց նախկին տարազին: Պարզվել է, որ նրանք հագնում են պատրաստի հագուստներ, շքեղ տեսքով փաթաթվում են բարակ ներկված դյուլբենտների մեջ, մի մասը կրում է սպիտակ, իսկ մի մասն էլ կարմիր մաշիկներ: Այսպիսով նրանք իրենց տեսքով և շարժումներով նմանվում են մահմեդականներին:

Այս բոլորը նախապես էլ արգելված էր իմ բարձր ֆերմանով: Վերը նշվածի պես հագնվելու, դյուլբենտների մեջ փաթաթվելու և նման մաշիկներ կրելու մասին երբեք իմ վսեմ կարգադրությունը չի եղել:

Արդ այս բոլորը արգելվելով հրամայում եմ: [Իմ հրամանը] տեղ հասնելուն պես, առանց հետաձգելու, այս խնդրին անձամբ հետևես և շուտափույթ կերպով զգուշացնես և անհրաժեշտ կարգադրությունը կատարես, որպեսզի այսուհետև հրեաների և քրիստոնյաների հագած շուփաները, իշքերլատները, խալաթները պատրաստված չլինեն ատլասից, կամկալից² և այլ մետաքսյա գործվածքներից: Ֆերաջեները նույնպես չպետք է, որ մետաքսից լինեն, այլ աստառացու կտորից: Դյուլբենտը նույնպես բարակ և նուրբ տեսակի չի լինելու, և իրենց գլխի փաթեթներն էլ ոչ այնքան շքեղ: Մի խոսքով չպետք է իրենց արտաքինով և շարժումներով նմանվեն մահմեդականներին: Ինչ որ հնուց ի վեր սովորություն են ունեցել հագնելու՝ թող այդպես էլ հագնեն: Թող մահմեդականի տարազի ձևը չունենան: Թույլ չտաս, որ հակառակ իմ հրամանի տարազ կրեն: Նրանք, ովքեր չեն հնազանդվի և հակառակ իմ բարձր հրամանի կվարվեն, ենթարկվելու են պատժի: Անհնազանդներին կալանքի տակ առնելով կբանտարկես և կտեղեկացնես³:

1. Հրամանագիրը տրված է սուլթան Մուրադ III-ի կողմից:

2. Մետաքսյա գունազարդ գործվածքներն:

3. Ahmet Refik, s. 51.

10

Կ. Պոլսում հրեաների և քրիստոնյաների գլխարկ կրելու մասին

23 ռեբի ուլ-էվլե 588 թ.

(7 մայիսի 1580 թ.)

Հրամանագիր Կ. Պոլսի կադիին՝

Հանգուցյալ և ողորմած իմ պապի՝ սուլթան Մեհմեդ խանի (1451—1481 թթ.), թող աստված ողորմի նրա հոգուն, ժամանակ հրեաները իրենց գլխներին կրում էին կարմիր գլխարկ, իսկ հագնում՝ սև մաշիկներ և երկարաձիտ կոշիկներ։ Արտահագուստը պատրաստված էր լինում աստառացու կտորից։ Քրիստոնյա համայնքները սև գլխարկ էին կրում։

Այժմ հրամայում եմ, որ հիշյալ [հրեաների] համայնքը դյուլբենտի մեջ չփաթաթվի։ Նախկին սովորության համաձայն թող կարմիր գլխարկ կրեն, մաշիկները և երկարաձիտ կոշիկները սև լինեն, իսկ արտահագուստը՝ աստառացու կտորից։ Քրիստոնյաները նույնպես թող դյուլբենտի մեջ չփաթաթվեն և գլխներին սև գլխարկ կրեն։

Հրամանագիրս տեղ հասնելուն պես հետևիտ այս խնդրին և իմ բարձր ֆերմանի համաձայն Բեդեստանում², թաղերի մեջ կամ մարդկանց հավաքատեղիներում հայտարարի և խստագույն կերպով պատվիրի։ Որ այսուհետև իմ բարձր հրամանի համաձայն հրեաները կարմիր գլխարկ կրեն, ոտքերին՝ սև մաշիկներ և երկարաձիտ կոշիկներ, իսկ արտահագուստն էլ լինի աստառացու կտորից։

Քրիստոնյա համայնքները ևս վերը նշվածի պես դյուլբենտի մեջ չփաթաթվեն։ Թող սև գլխարկ կրեն։ Նղիբ ջանադիր իմ այս բարձր ֆերմանի գործադրության համար։

Այս հարցի կատարման համար իմ կայսերական հրամանով վերակացու է նշանակված ենիչերիների աղա Իբրահիմը։

Հիշյալի հետ խորհրդակցելով եղեք ջանադիր և իմ բարձր հրամանը կատարեք³։

1. Հրամանագիրը տրված է սուլթան Մուրադ III-ի կողմից։

2. Հնագույն ծածկած մեծ շուկա Կ. Պոլսում։

3. Ahmet Refik, s. 51.

11

Կանուն¹

Ոչխարի խարաջի և ոչխարի հարկերի վերաբերյալ փադիշահի ֆերմանը այսպես է հրամայում։

Մի քրիստոնյայից որպես մակթու² կանխիկ գանձվում է հարյուր հիսուն ակչե։ Սրա հարյուր քառասուն ակչեն պահ է տրվում, իսկ տաս ակչեն հատկացվում է խարաջ հավաքողների ոռճիկի համար։ Հնուց ի վեր որոշված է եղել բարձր խարաջի գանձումը, այն փոփոխության չի ենթարկվում և մնում է նախկինի պես։ Որպես ոչխարի հարկ յուրաքանչյուր ոչխարից գանձվում է մեկ ակչե։ Երեք հարյուր ոչխարից որպես աղբի³ հարկ գանձվում է հինգ ակչե։ Հրամայված է յուրաքանչյուր հարյուր ոչխարից հավաքողների համար քսանհինգ ակչե հատկացնել։ Ավելի կամ պակաս չգանձելու մասին գոյություն ունի փադիշահի հրամանը, և այս կապակցությամբ 1004 (1595) թ. գանձատան և դիվանի կողմից արձակված են վճիռներ։ Այս խստությունը մտցրել է Սինան փաշան⁴։ Թող [նա] սրա պատասխանը հանդերձյալ աշխարհում տա։ Մեկ ոչխարից վերցրած մեկ ակչեն միմիայն գանձատան համար է հատկացվում։ Թիմարատերերը, բեյլերբեյիները և սանջակբեյները իրենց խասերից վակֆի⁵ համար երկու ոչխարից մեկ ակչե վերցնելը հին օրենք է։

Կանոն

1012 (1603) թ.

Բ: մահմեդական ռայաթը⁶ իր սիփահուն իսպենջ⁷ տալու ընթացքում եթե մահմեդական դառնա, այլևս սիփահին «դու մինչև հիմա իսպենջ էիր տալիս և շարունակելու ես տալ» ասելով, չի կարող նրանից իսպենջ պահանջել: Մահմեդական դառնալուց հետո նրանից գանձվելու է բեննաթի⁸ հարկ:

Այսպես է օրենքը:

Կանոն

Զիֆթի⁹, բեննաթի և մյուշերրեդի¹⁰ հարկերը ըստ օրենքի գանձվում են յուրաքանչյուր տարվա մարտ ամսին: Մարտ ամսվա առաջին օրը ով որ նշանակված է չիֆթի, բեննաթի և մյուշերրեդի հարկերը հավաքելու համար, նրան էլ այն պատկանելու է: Մի շարք վիլայեթներին դաֆթարներում հարկերը քիչ են արձանագրված, իսկ մի շարք վիլայեթներում էլ շատ: Հարկերը գանձվելու են յուրաքանչյուր վիլայեթի ընդարձակ դաֆթարի համաձայն: Ոչ մահմեդականի համար նշանակված է իսպենջի հարկ: Լինի ամուսնացած կամ ամուրի, հող ունենա կամ չունենա, միևնույն է, քսանհինգ ակչե իսպենջ տալը արձանագրված է Ռումի վիլայեթի կանոննամեում:

1. Հաջորդաբար բերված երեք կանոնները (օրենքները) քաղել ենք Հ. Քյունջերի գրքից: Այդ կանոնները նա հայտնաբերել է Դեղդեհի ազգային գրադարանում: H. Tuncer. Osmanlı imparatorlugunda toprak kanunları. Ankara, 1965, s. 11, 13.

2. Այսպես էին կոչվում այն հարկերը, որոնք յուրաքանչյուր տարի սիստեմատիկաբար, առանց հաշվի առնելու բերքի քանակն ու պայմանները, նախապես որոշված հատուկ գումարով գանձվում էին պետության կամ ավատատիրոջ օգտին:

3. Ոչխարի համար գանձվող հարկ:

4. Մեծ վեզիր Սինան փաշան, սուլթան Մուրադ III-ի և սուլթան Մեհմեդ III-ի (1595—1603 թթ.) ժամանակ հինգ անգամ զբաղեցրել է մեծ վեզիրի պաշտոնը:

5. Մղկիթապատկան կալվածքներ:

6. Օգտագործվել է հարկատու հողագործ գյուղացիության իմաստով: XVI դարից ռեայս¹¹ են անվանվել հատկապես չրիստոնյա հպատակները:

7. Քրիստոնյա գյուղացիներից գանձվող զլխահարկ:

8. Ավատատիրոջը հողագործ գյուղացու վճարած հարկերից մեկը:

9. Հողային հարկ:

10. Ամուրիության հարկ:

12

Հարձակում եկեղեցու և վանքի վրա¹

Մուհարրեմ 1136 թ.
(հոկտեմբեր 1723 թ.)

1720 թ. հոկտեմբերին Թոքաթում Քառասուն² եկեղեցին ընդարձակելու համար, երբ կառավարությունից թույլտվություն է ձեռք բերվում, Թոքաթի մահմեդական բնակչությունը գազազելով շեղվել (հոկտեմբեր) ամսի 22-ին կիրակի օրը եկեղեցու վերանորոգման աշխատանքները սկսելու ժամանակ, աղմուկ աղաղակ բարձրացնելով, հարձակվում է, եկեղեցին քանդում, իսկ վանքն էլ այրում:

1. H. T. Çinlioğlu. Osmanlılar zamanında Tokat. Tokat, 1950, 2-cı kısım, s. 34. Զինիօղլուն իր այս աշխատությունը կազմել է ժամանակագրական կարգով, թուրքական վավերագրերի հիման վրա:

2. Խոսքը Թորաթի հայոց Քառասուն Մանկանց եկեղեցու մասին է: Այս իրադարձությունը արձանագրված է նաև «Պատկերահանի ավետարան» կոչված հայերեն ձեռագրի հիշատակարանում. «Ֆերման բերին զսուրբ Քառասնից եկեղեցին նորոգելու, ադին հրաման և նորոգեցին մինչև ոչ թամախին (լրանալն) ժողովեցան Թուխաթու ալլադգիբն ամենայն, գրոհ տուեալ հասին ի սուրբ Քառասունք և բակեցին...» (տե՛ս Մանր մատենագիրք. գիրք Ժ, ԺԵ—ԺԹ գարհրատ. Գյուտ Աղանյանց, Թիֆլիս, 1912, էջ 378):

13

Մանմեղականների տները վարձակալած ֆրիստոնյաների մասին¹

11 սաֆեր 1224 թ.
(28 մարտի 1809 թ.)

Մեծ վեզիր Յուսուֆ Զիյա փաշան Թորաթից անցնելու ընթացքում, երբ տեղեկանում է, որ մասնագիտական տներում քրիստոնյա վարձակալներ են ապրում, հրամայում է նման մարդկանց հեռացնել մասնագիտական թաղերից, փաստարկելով, որ այդ երևույթը հակառակ է շարիաթի սկզբունքներին:

1. H. T. Çinlioğlu. Osmanlılar zamanında Tokat. 3-cu kısım, Tokat, 1951, s. 55.

14

Կումանատի ֆրիստոնյաների նկատմամբ կատարվող զուլումները

1232 (1817) թ.

Կումանատ գյուղի¹ քրիստոնյաները բողոքարկել են այն մասին, որ իրենց վրա նշանակված հարկերը ամբողջությամբ վճարելուց հետո գյուղի սուբաշին² լուրաքանչյուր անհատի համար նշանակված 62 փարայից ավելի գանձումներ է կատարել³:

1. Թորաթի շրջակա գյուղերից մեկը, որի բնակիչների մեծ մասը հայեր էին:

2. Կարգ ու կանոնին հսկող պաշտոնյա:

3. H. T. Çinlioğlu. Osmanlılar zamanında Tokat. 3-cu kısım, s. 83.

15

Յրլըրգի կայսերական սլախտ, գլխավոր ֆարտուղարության գրասենյակ

...Արգելված է «Հայաստան», պատմության ու աշխարհագրության վերաբերող նման այլ անունների հիշատակումը¹:

Կայսերական գլխավոր քարտուղար՝ Թահսին

1. Արդուլ Համիդ II-ի ժամանակ տրված այս հրահանգը ուղղված էր մամուլի գրաքննչական վարչությանը: Այն բաղկացած էր 9 հոդվածներից: 7-րդ հոդվածը վերաբերում էր Հայաստանին: Օսման Նուրին նշում է, որ այս հոդվածի հիման վրա գրաքննիչները խոսակցական լեզվից հանել էին հետևյալ բառերը՝ հեղափոխություն, ազատություն, ազգային իրավունք, հավասարություն, հայրենիք, ազգ, պառլամենտ (տե՛ս Osman Nuri. Abdul Hamid sâni ve devr-i sultanatı. I tanbul, 1327, s. 582, արաբատառ):

Կալսերական հրաման Մարաշի ուսնչակի ներսում Զեյթուն կազան
Սուլեյմանլը վերանվանելու մասին

Թիվ 248

17 ռեյեր 1333 թ.
(31 մայիսի 1915 թ.)

Մարաշի սանչակի ներսում Զեյթուն կազայի անունը պատշաճ է համարվել Սուլեյմանլը վերանվանելու: Կալսերական այս հրամանի գործադրությունը հրամայված է ներքին գործերի մինիստրությունը¹:

Մուլթան Մեհմեդ Ռեշադ:

1. Dusiür. Tertip-i sanı, c. 7, Dersaadet, 1336, s. 615 (արարատառ). Հրամանադիրը հրապարակված է նաև «Թարվիմ-ի վաթայի» պաշտոնական թերթում, տե՛ս Տ հունսի 1915 թ., N 2196:

ՄԷՋՆԱԳԱՐԻ ԹՈՒՐԹ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԸ ՌԵՍՅԱՅԻ ՇԱՆԻՎ ԳԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Մուստաֆա Սելանիկի էֆենդի (XVI դար)

«Ժամանակի իշխողները տղաների գեղիմբի գործում անխիղճ են եղել և նվերի անվան տակ շատ մեծ կաշառքներ են վերցրել: Ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք ագահորեն հարձակվել են երկրի ուսանողների վրա: Ունենոր ուսանողներից խլել են անթիվ անհամար հարստություն, իսկ աղքատ ուսանողներից՝ նրանց զավակներին, քանդել են նրանց տունն ու տեղը»¹:

1. Mustafa Selaniki. Tarih-i Selânikî. Dersaadet, 1281, s. 263 (արարատառ) աև « նաև Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. հ. 2, Երևան, 1964, էջ 137:

Քյաթիր Զելեբի (XVII դար)

«Այնուհետև ժամանակավոր անդորրից հետո հայտնվեցին ջելալիները, որոնք և պատճառ հանդիսացան ուսանողի աղքատացման: Միջուղացիները լքելով իրենց տներն ու գյուղերը փախան դեպի քաղաքները: Նվաստ մինչև 1045 (1635) թվականը տասներկու տարի շրջագայել և երկրում և տեսել մեծ ավերածությունները»²:

1. Խոսքը XVI—XVII դդ. Օսմանյան կայսրությունում ծավալված աղետամրություն մասին է:

2. Քյաթիր Զելեբին 1635 թ. սուլթան Մուրադ IV-ի հետ մասնակցել է Երևանի պաշարմանը և եղել պատմական Հայաստանի զրեթե բոլոր շրջաններում: Քյաթիր Զելեբիի «Գյուստուր ուլ-ամել լի իսլահ ուլ-հալե» երկից ենք վերցրել այս հատվածը, որը հրատարակված է հետևյալ գրքում՝ Aynı Ali. Kavanin-i al-i Osman der hulasa-i mezamın-i defter-i divan. Dersaadet, 1280, s. 127 (արարատառ):

Ահմեդ Զեդեբ (XVIII դար)

«Որոշ ժամանակից ի վեր թշվառ ուսանողի նկատմամբ գործադրվող բռնություններն ու անիրավությունները շափ ու սահման չունեն: Այդ իսկ պատճառով ուսանող լքելով իր երկիրն ու հայրենիքը՝ ցիր ու ցան էր լինում, որի հետևանքով երկիրն աղքատվում էր և վերածվում ագռավների և բուերի բնի...: Երկրի այս աստիճան աղքատության պատճառը միայն պատերազմական շարժումները չէին. երկրի ազգաբնիկները, կաղիները, նայիրները և այլ պաշտոնյաները, ի շահ իրենց, բռնություն մեծ և դաժանություն մեծ սովորական պատերազմական

տուրքերից մի քանի անգամ ավելի զանձումներ էին կատարում աղքատ ուսուցիցներին»¹։

1. Ahmet Cevdet. Tarih-i Cevdet. c. 4, Dersaadet, 1871, s. 235 (արաբատառ).

* * *

«Իմ տիրակալ¹, Ձեր ուսանող հանդիսացող ստրուկները շատ աղքատ են և զյուղերից ցիր ու ցան լինելով փախել են այս ու այն կողմ։ Այս մոտ ժամանակներս, եթե պատերազմ լինի, ապա շատ դժվարությունների առաջ եք կանգնելու նույնիսկ, եթե 3—4 ասորի պատերազմ չլինի [ուսանող] չի կարող ինքնիրեն հավաքել, իսկ լինելու դեպքում էլ հնարավոր չէ այդ բոլոր դժվարությունները տանել...»

Իմ տիրակալ, Ձեզ համար շատ կարևորություն ունեցող ուսանող վրայից անհրաժեշտ է վերացնել անտեղի հավաքվող հարկերը։ Միևնույն ժամանակ բարձր հրաման արձակեք Օսմանյան կայսրությունում հաշվառում անցկացնելու մասին։ Բեյերբեյներին և սանջակբեյներին կայսերական հանձնարարական տվեք, որպեսզի այսուհետև ուսանող չզանձվեն կաֆիան բահայի, սելամիյեյի և նալ բահայի հարկերը², քանի որ ուսանող վիճակը առանց այն էլ շատ ծանր է։

Ձեր վեզիր ստրուկին բարձր պարգադրություն արեք, որպեսզի ամբողջ Օսմանյան կայսրությունում պետք եղածի պես հաշվառում անցկացնելու համար խելահաս և ազնիվ մարդիկ ուղարկի։ Թող անուշադրության չմատնի այս հարցը և ջանք թափի, որպեսզի ուսանող ազատվի զուլումից»։

1. Օսմաներեն շաբաղրված այս անունն ուղերձը Լեյզենի համալսարանի գոադարանից 1968 թ. հայտնաբերել է Սուհեյլ Ունվերը և հրապարակել թուրքական պատմության ընկերության «Տեղեկագրում» (տե՛ս «Belleten», 1969, № 129, ք. 24—34)։ Այս ուղերձը ուղղված է սուլթան Մուստաֆա II-ին (1695—1703)։ Մենք քաղվածաբար բերել ենք այն հատվածը, որը վերաբերում է ուսանող ծանր վիճակին։

2. Անօրինական գանձվող հարկեր։

НЕКОТОРЫЕ ТУРЕЦКИЕ ДОКУМЕНТЫ О НЕМУСУЛЬМАНСКИХ НАРОДАХ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

А. А. ПАПАЗЯН

(Резюме)

В данной статье публикуются в армянском переводе султанские фирманы и официальные постановления о немусульманских народах Османской империи. Они содержат многочисленные сведения о тяжелой налоговой системе, о разрушении церквей и других культовых сооружений, о строгой регламентации и ограничениях религиозных церемоний, а также о ношении национальной одежды, запрете продажи вина и другие материалы подобного характера. Материалы, почерпнутые из архивных изданий Турции, со всей очевидностью свидетельствуют о тяжелом положении немусульманского населения, о насилиях над ним со стороны властей.